

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 06 » ապրիլի 2012 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույնով սահմանվում է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի /այսուհետև՝ ԳՊՄԻ/ կանոնադրության հիմնադրույթներին համապատասխան գիտական խորհրդի կանոնակարգը /այսուհետև՝ կանոնակարգ/:
- 1.2 Գիտական խորհուրդն ինստիտուտի ռեկտորի նախագահությամբ գործող կառավարման մարմին է: Այն կարգավորում և համակարգում է ինստիտուտի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությունը, աշխատանքի պլանավորման, կառավարման և կազմակերպման հիմնահարցերը, մրցույթային կարգով պրոֆեսորադասախոսական բոլոր պաշտոնների տեղակալման հարցերը և ընդունում համապատասխան որոշումներ:
- 1.3 Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են ինստիտուտի բոլոր ստորաբաժանումների, խորհուրդների, պաշտոնատար անձանց, աշխատողների և ուսանողների համար:

2. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1 Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազնամիսը մեկ անգամ:
- 2.2 Գիտական խորհուրդն իր լիազորությունների շրջանակներում հաստատում է.
 - 2.2.1 իր կանոնակարգը,
 - 2.2.2 ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների օրինակելի կանոնադրությունները, ԳՊՄԻ-ի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը, ուսումնական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական այլ ակտեր,
 - 2.2.3 ինստիտուտի ռեկտորի ներկայացմամբ հասկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում ըստ մասնագիտությունների վճարովի հիմունքներով ընդունելության տեղերը, սահմանում է վարձավճարներ:
- 2.3 Ռեկտորի ներկայացմամբ որոշում է ստեղծել, վերակազմավորել, լուծարել ֆակուլտետներ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ:
- 2.4 Քննարկում և հաստատում է ինստիտուտի՝ օտարերկրյա պետությունների հետ կապված համագործակցության ուղղությունները, միջազգային ծրագրերը և ինստիտուտի կողմից կնքվող միջազգային պայմանագրերի նախագծերը:
- 2.5 ԳՊՄԻ-ի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազոր մարմին է ներկայացնում միջնորդագրեր ԳՊՄԻ-ի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:
- 2.8 Հաստատում է ուսումնական պլաններն ըստ մասնագիտությունների:
- 2.9 Քննարկում է ինստիտուտի ուսումնագիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում հաշվետվություններ ինստիտուտում կատարվող գիտահետազոտական, գիտամեթոդական և ուսումնական աշխատանքների արդյունքների մասին:
- 2.10 Անցկացնում է ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր տեղերի մրցութային ընտրությունները և հաստատում արդյունքները:
- 2.11 Շնորհում է գիտական կոչումներ, ինստիտուտի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում է ինստիտուտի մեդալով, պատվոգրով, առաջադրում է թեկնածություններ հանրապետական և միջազգային պարգևների և կոչումների համար:
- 2.12 Առաջարկություններ է ներկայացնում Խորհրդին ինստիտուտի կանոնադրության փոփոխությունների և լրացումներ կատարելու վերաբերյալ, ինստիտուտի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ:

- 2.13 Քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական, գիտական և մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող խնդիրներ, ըստ անհրաժեշտության՝ ընդունում հայտարարություններ:
- 2.14 Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և ԳՊՄԻ-ի կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

3 ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

- 3.3 Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 60-ը:
- 3.4 Ի պաշտոնե գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ինստիտուտի ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, ինստիտուտի գիտական քարտուղարը (որն իրականացնում է նաև գիտական խորհրդի քարտուղարի պարտականությունները), ֆակուլտետների դեկանները, միայն համաինստիտուտային նշանակության ամբիոնների վարիչները, որակի ապահովման կենտրոնի տնօրենը, արհեստակցական կազմակերպության նախագահը, գրադարանի տնօրենը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև ռեկտորի նշանակմամբ՝ գործատուների ներկայացուցիչներ, հանրապետության գիտության, կրթության, մշակույթի ոլորտի առաջատար մասնագետներ, հասարակական, քաղաքական գործիչներն ընտրովի անդամներ՝ սույն կանոնակարգին համապատասխան:
- 3.5 Ի պաշտոնե և ռեկտորի նշանակմամբ՝ գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի թվակազմի 50 տոկոսը:
- 3.6 Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսն ուսանողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է ուսանողական խորհուրդը՝ իր կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 3.7 Կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող ընտրովի անդամների տեղերի չափաբաժինների համամասնությունը սահմանում է ռեկտորը, իսկ ստորաբաժանումներում անդամների ընտրությունը կատարվում է ստորաբաժանման կանոնադրությամբ՝ սահմանված կարգով:

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1 Գիտական խորհուրդը հրավիրում է հերթական և արտահերթ նիստեր:
- 4.2 Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են տարեկան առնվազն 10 անգամ:
- 4.3 Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ) և գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար):
- 4.4 Գիտական խորհրդի քարտուղարը գիտական խորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրում և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ, արտահերթ նիստի անցկացման օրվանից՝ առնվազն երեք օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) գիտական խորհրդի անդամներին ուղարկում է նիստի անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:
- 4.5 Ըստ անհրաժեշտության՝ գիտական խորհրդի նախագահի կողմից կամ գիտական խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով, նրանց կողմից առաջարկված օրակարգով և ժամկետներում, հրավիրվում են գիտական խորհրդի արտահերթ նիստեր:
- 4.6 Գիտական խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:
- 4.7 Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում, գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 30 րոպե, իսկ դրանից հետո քվորում չապահովելու պարագայում նիստը հետաձգվում է:
- 4.8 Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված կանոններով:
- 4.9 Ռեկտորը, բացելով գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը:
- 4.10 Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել, փոփոխել նիստի օրակարգում ընդգրկված հարցերը, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:
- 4.11 Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ:

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1 Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այդ որոշման ընդունման համար քվեարկության այլ կարգ չի սահմանել:
- 5.2 Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների ներկայացման, ամբիոնի վարիչի ընտրության և այլ մրցույթները կատարվում են փակ գաղտնի քվեարկությամբ (տե՛ս համապատասխան կարգերը):
- 5.3 Փակ գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ մինչև գիտական խորհրդի նիստի սկսվելը:
- 5.4 Քվեաթերթիկներում նշվում է գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ»:
- 5.5 Քվեաթերթիկի հակառակ երեսին ստորագրում է գիտական քարտուղարը, իսկ անհրաժեշտության դեպքում գիտական խորհրդի որոշմամբ նաև հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:
- 5.6 Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկատվություն է տրամադրում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:
- 5.7 Քվեաթերթիկը վավերական է, եթե դրանում քվեարկվել է միայն մեկ տարբերակ:
- 5.8 Հաշվիչ հանձնաժողովի անդամներն առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում քվեարկության արդյունքների հաշվառումը:
- 5.9 Քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:
- 5.10 Քվեարկության արդյունքները հաստատվում են գիտական խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

6. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- 6.1 Գիտական խորհրդի որոշումները հաստատվում են ռեկտորի հրամանով:
- 6.2 Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք իրավաբանական հիմնավորմամբ չեն բխում խորհրդի լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ԳՊՄԻ-ի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին: Ռեկտորի կողմից գիտական խորհրդի որոշման կասեցման դեպքում նշանակվում է որոշման վերաքննարկում:
- 6.3 Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին ռեկտորի հրամանները պետք է լինեն իրավաբանորեն հիմնավորված և պատճառաբանված:
- 6.4 Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք ռեկտորի կողմից կասեցվել են, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում:

6.5 Գիտական խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում խորհրդի անդամի թափուր մնացած տեղը զբաղեցվում է ի պաշտոնե կամ կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությամբ՝ սահմանված կարգով:

7. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- 7.1 Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը երկու օրինակից կազմում է գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստն ավարտելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և գիտական խորհրդի քարտուղարը:
- 7.2 Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

8. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- 8.1 Հաշվիչ հանձնաժողովը ձևավորվում է գիտական խորհրդի որոշմամբ: Նիստում հաշվիչ հանձնաժողովի կազմն ընտրվում է բաց քվեարկությամբ՝ գիտական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների կողմից:
- 8.2 Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում քվեարկության կարգի պահպանումը, կազմում արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում գիտական խորհրդի հաստատմանը:

9. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

- 9.1 Ըստ անհրաժեշտության՝ գիտական խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ (մրցութային, որակի ապահովման, կանոնակարգերի մշակման և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում են գիտական խորհրդի կողմից:
- 9.2 Յուրաքանչյուր հանձնաժողով ուսումնասիրում է իրեն վերապահված խնդիրները և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին է ներկայացնում համապատասխան առաջարկություններ և եզրակացություններ:
- 9.3 Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:

- 9.4 Հանձնաժողովներն իրավասու են սահմանված կարգով ԳՊՄԻ-ի կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:
- 9.5 Հանձնաժողովների նիստերն իրավագոր են հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:
- 9.6 Հանձնաժողովներում քննարկվող փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
- 9.7 Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդին: